ե) Ճարտասանական հնարքները

Ճարտասանական հնարքները պատմագրության մեջ մեծամասամբ ծառայում են վկայագրվող իրադարձությունների հավաստիությունը փաստարկելու և հիմնավորելու, ընթերցողի մոտ սեփական վկայագրումների հանդեպ հավատ ընծայելու, ինչպես նաև պատկերվող որևէ երևույթ կամ իրադարձություն ընդգծելու համար: Դավրիժեցու պատմագրքում, ի շարս այս նպատակների, ճարտասանական հնարքները թերևս կարելի է նաև ներառել պատմության շարադրման դավրիժեցիական սկզբունքների, նրա աշխատաոճի յուրահատկությունների տիրույթում, քանզի, օրինակ, իրադարձության պատճառների հետևողական նշումները պատմության՝ առավել ճշգրիտ ու հավաստի ներկայացման նպատակ են հետապնդում: Այդպես, նշելով՝ «Եւ Դաւիթ կաթուղիկոսն, որ զՄելքիսէթն օրհնեաց կաթուղիկոս», Դավրիժեցին անմիջապես հավելում է՝ «սմա ասեն երկուս պատճառ» (էջ 57–58): Ընդ որում՝ պատճառները ոչ թե իր՝ պատմիչի տրամաբանությամբ են ներկայացվում, այլ՝ ուրիշների վկայությունների ներբերման միջոցով՝ «Ոմանք ասեն..., Իսկ այլք ոմանք ասեն...»: Այսինքն՝ Դավրիժեցին պատճառաբանում է այլտեքստերի հիմամբ, որը տարածված ճարտասանական հնարանք է: Լրացուցիչ աղբյուրների վկայաբերումը ամրագրում է խոսքի արժեքը: